



ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

---

СТУДЕНЧЕСКОЕ НАУЧНОЕ ОБЩЕСТВО  
STUDENT SCIENTIFIC SOCIETY

ISSN 1829-4367

## **СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ СНО ЕГУ**

### **COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF YSU SSS**

#### **1.4 (30)**

##### **Общественные и гуманитарные науки**

(Богословие, востоковедение, литературоведение, правоведение, журналистика, языкознание, педагогика, история, социология, экономика и управление, философия и психология, политология и международные отношения)

##### **Humanities and Social Sciences**

(Theology, Oriental Studies, Literary Studies, Jurisprudence, Journalism, Linguistics, Pedagogy, History, Sociology, Economics and Management, Philosophy and Psychology, Political Science and International Relations)

ЕРЕВАН - YEREVAN  
ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ - YSU PRESS  
2019

## ԵՊՀ ՌԻԳԸ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

### 1.4 (30)

#### **Հասարակական և հումանիտար գիտություններ**

(Աստվածաբանություն, արևելագիտություն, գրականագիտություն, ժուռնալիստիկա, իրավագիտություն, լեզվաբանություն, մանկավարժություն, պատմություն, սոցիոլոգիա, տնտեսագիտություն և կառավարում, փիլիսոփայություն և հոգեբանություն, քաղաքագիտություն և միջազգային հարաբերություններ)

**Հրատարակվում է ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ**  
**Издаётся по решению Ученого совета ЕГУ**  
**Published by the Resolution of the Academic Council of YSU**

**Խմբագրական խորհուրդ՝**

բ.գ.դ., պրոֆ. Դ. Պետրոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Լ. Մաթևոսյան  
բ.գ.դ., պրոֆ. Յու. Ավետիսյան  
բ.գ.դ., պրոֆ. Ս. Մուրադյան  
բ.գ.դ., պրոֆ. Վ. Հարությունյան  
հ.գ.դ., պրոֆ. Հ. Ավանեսյան  
պ.գ.դ., պրոֆ. Ս. Մկրտչյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Մնացականյան  
տ.գ.դ., պրոֆ. Հ. Սարգսյան  
ք.գ.դ., պրոֆ. Գ. Քեոյան  
բ.գ.դ., դոց. Շ. Պարոնյան  
բ.գ.թ., դոց. Ն. Վարդանյան  
բ.գ.թ., դոց. Վ. Եղիազարյան  
տ.գ.թ., դոց. Կ. Խաչատրյան  
բ.գ.թ., ասիստ. Ն. Պողոսյան  
ի.գ.թ., ասիստ. Վ. Գրիգորյան  
ի.գ.թ., ասիստ. Տ. Սուջյան  
ի.գ.թ., ասիստ. Ա. Թավադյան  
հ.գ.թ., ասիստ. Դ. Սարգսյան  
պ.գ.թ., ասիստ. Ռ. Կարապետյան  
փ.գ.թ., ասիստ. Կ. Յարալյան

**Редакционная коллегия:**

д.ф.н., проф. Д. Петросян  
д.ф.н., проф. Л. Матевосян  
д.ф.н., проф. Ю. Аветисян  
д.ф.н., проф. А. Мурадян  
д.ф.н., проф. В. Арутюнян  
д.п.н., проф. Г. Аванесян  
д.и.н., проф. С. Мкртчян  
д.э.н., проф. А. Мнацаканян  
д.э.н., проф. А. Саргсян  
д.п.н., проф. Г. Керян  
д.ф.н., доц. Ш. Паронян  
к.ф.н., доц. Н. Варданын  
к.ф.н., доц. В. Егиазарян  
к.э.н., доц. К. Хачатрян  
к.ф.н., ассист. Н. Погосян  
к.ю.н., ассист. В. Григорян  
к.ю.н., ассист. Т. Суджян  
к.ю.н., ассист. А. Тавадьян  
к.п.н., ассист. Д. Саргсян  
к.и.н., ассист. Р. Карапетын  
к.ф.н., ассист. К. Яралян

**Editorial Board**

DSc, Prof. D. Petrosyan  
DSc, Prof. L. Matevosyan  
DSc, Prof. Y. Avetisyan  
DSc, Prof. S. Muradyan  
DSc, Prof. V. Harutyunyan  
DSc, Prof. H. Avanesyan  
DSc, Prof. S. Mkrtchyan  
DSc, Prof. H. Mnatsakanyan  
DSc, Prof. H. Sargsyan  
DSc, Prof. T. Keryan  
DSc, Associate Prof. Sh. Paronyan  
DSc, Associate Prof. N. Vardanyan  
DSc, Associate Prof. V. Yeghiazaryan  
PhD, Associate Prof. K. Khachatryan  
PhD, Assistant Prof. N. Poghosyan  
PhD, Assistant Prof. V. Grigoryan  
PhD, Assistant Prof. T. Sujyan  
PhD, Assistant Prof. A. Tavadyan  
PhD, Assistant Prof. D. Sargsyan  
PhD, Assistant Prof. R. Karapetyan  
PhD, Assistant Prof. K. Yaralyan

Հրատարակիչ՝ ԵՊՀ հրատարակչություն  
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ալ. Մանուկյան 1, (+374 10) 55 55 70, publishing@ysu.am

**ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ  
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ներկա ժամանակաշրջանում հասարակական հարաբերությունների տարբեր բնագավառների զարգացմանը զուգընթաց պետությունների համագործակցության ոլորտներն առավել մեծ շրջանակներ են ընդգրկում: Ազգային իրավական այլ սուբյեկտների միջև հարաբերությունների նման զարգացման պայմաններում մեծանում են նաև սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության անհրաժեշտության ռիսկերը, որոնք տարբեր երկրների օրենսդրություններով տարբեր կերպ են կարգավորվում: Բնականաբար, ՀՀ քաղաքացիների, իրավաբանական անձանց հետ համագործակցության ոլորտներ ուրվագծող այլ պետությունների քաղաքացիներն ու կազմակերպությունները ցանկություն և իրավունք ունեն՝ ստանալու որոշակի երաշխիքներ, որ իրենց պետությունների դատական իշխանության մարմինների հաստատած իրավունքները կպաշտպանվեն նաև իրենց պետության սահմաններից դուրս: Ահա այս է պատճառը, որ հարկ կա խոսելու օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման թույլատրելիության ինստիտուտի կարևորության մասին:

Միջազգային փորձն ուսումնասիրելիս հանգում ենք առավել լայն տարածում ստացած մի քանի սկզբունքների, որոնց մեկնաբանություններն ընկած են սույն ինստիտուտի հասկացության սահմանման հիմքում [1]: Համակարգային մեկնաբանումը թույլ է տալիս հանգել այն կարծիքին, որ այս ինստիտուտը կապվում է օտարերկրյա դատական ակտի ինչպես ճանաչման բուն ընթացակարգի, այնպես էլ դրա առաջացրած հետևանքների հետ:

Օտարերկրյա դատական ակտերի ճանաչումն իրավաբանական գործողություն է, որով պետությունն օտարերկրյա դատական ակտն օժտում է իրավական այնպիսի հատկանիշներով, որոնցով օժտված են տվյալ պետության դատարանների՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտերը և թույլատրում այդ ակտի գործողությունն իր տարածքում՝ վերապահմամբ, որ դրա ներգործությունը չի կարող լինել ավելին, քան կլիներ տվյալ դատական ակտի ծագման պետության տարածքում: Արդյունքում այն ձեռք է բերում անհերքելիություն, բացառիկություն, նախադատելիություն, պարտադիրություն, իսկ կատարման ենթակա դատական ակտերը՝ նաև կատարելիություն [2]:

Նախկին ՔԴՕ-ն ամրագրում էր ոչ թե օտարերկրյա դատական ակտերի կատարման թույլատրելիությունը, այլ կատարումը: Ինդիրն այն է, որ քանի դեռ օտարերկրյա դատական ակտը հայցվող պետությունը չի ճանաչել, այսինքն՝ պետությունը վերջինիս չի օժտել անհերքելիության, բացառիկության, նախադատելիության և

պարտադիրության հատկանիշներով, այն չի կարող ձեռք բերել կատարելիության հատկանիշներ:

Ներկայումս ՀՀ-ում գործում է օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման էկզեկվատուրայի տրամադրման համակարգը, որով պետությունները դասակարգվում են ըստ ներքոնշյալ խմբերի՝

- 1) պետություններ, որտեղ հնարավոր է դատական ակտերի ըստ էության վերանայում,
- 2) պետություններ, որտեղ վերանայման հնարավորությունը սահմանափակված է,
- 3) պետություններ, որտեղ ճանաչման ենթակա դատական ակտը ոչ մի դեպքում չի վերանայվում, այսինքն՝ ունի մեխանիկական բնույթ [3]:

ՀՀ-ն պատկանում է երրորդ խմբի պետությունների շարքին, ինչը բխում էր քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի (այսուհետ՝ նախկին ՔԴՕ) 247<sup>6</sup> և 247<sup>7</sup> հոդվածներից: Այն փաստորեն սահմանում էր, թե որ ատյանի դատարանը կարող է ճանաչել դատական համապատասխան ակտը, և թե ով է ներկայացնում դատական ակտը ճանաչման, ինչպես նաև այն, թե որքանով է ճանաչման ենթակա դատական ակտը համապատասխանում այն պահանջներին, որոնք սահմանված են ՀՀ միջազգային պայմանագրերով: Եթե պահանջները բավարարված էին, և պայմանագրով նախատեսված մերժման հիմքեր առկա չէին, դատական ակտը ենթակա էր ճանաչման: Այս մասին որոշում էր կայացվում և կատարվում «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքին համապատասխան [4]:

Միջազգային պայմանագրի նախապայմանը մեկնաբանվում էր երկու մոտեցմամբ. առաջինի դեպքում միջազգային պայմանագրի առկայությունը դատական ակտերի ճանաչման և կատարման համար չէր մեկնաբանվում որպես պարտադիր պայման, և պետության հետ պայմանագրի բացակայության պայմաններում առաջնորդվում էին ոչ թե պետությունների միջև առկա պայմանագրով, այլ ՀՀ-ի կնքած միջազգային մյուս պայմանագրերի ընդհանուր կանոններով, երկրորդ դեպքում միջազգային պայմանագրի առկայությունը պարտադիր պայման էր, իսկ ճանաչման և կատարման թույլատրելու պայմանների կարգավորումը վերապահվում էր միջազգային պայմանագրերին: Գործնականում կիրառվում էր երկրորդ տարբերակը:

Նման պայմաններում ստեղծվում էր իրավիճակ, երբ ՀՀ-ն, որևէ երկրի հետ չունենալով միջազգային պայմանագիր, չէր կարողանում ինստիտուտի կարգավորումներն ապահովել ճյուղային օրենսդրությամբ, և հաճախ կիրառվում էր դատական հանձնարարությունների կատարման ինստիտուտը [5]:

Փորձենք համեմատական կարգով վերլուծել և վեր հանել հիմնական փոփոխությունները, որոնք տեղ են գտել քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքում (այսուհետև՝ նոր ՔԴՕ): Մինչ ՔԴՕ փոփոխությունները ՀՀ իրավական համակարգում փոխադարձության սկզբունքն ամրագրում չունեին: Իսնդիրն այն էր, որ նախկին ՔԴՕ-ն օտարերկրյա պետության դատական ակտի ճանաչման համար պարտադիր պայման էր համարում միջազգային պայմանագրի առկայությունը, ինչը

մեծ խոչընդոտ էր օրենսդրության զարգացման համար, քանի որ ՀՀ-ն, լինելով զարգացող պետություն, զարգացած մի շարք պետությունների հետ միջազգային պայմանագրեր չունի, մինչդեռ եղել են դեպքեր, երբ ՀՀ-ն, չունենալով միջազգային պայմանագիր որևէ պետության հետ, ըստ էության փոխադարձության սկզբունքի շրջանակներում ճանաչել է տվյալ պետության դատական ակտը [6]: Օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը և կատարումը փոխադարձության հիման վրա ենթադրում է, որ հայցվող պետությունն օտարերկրյա պետության դատարանի դատական ակտի ճանաչումը և կատարումը կապում է օտարերկրյա համապատասխան պետությունում սեփական դատական ակտերի ճանաչման և կատարման հետ:

Այդուհանդերձ, միջազգային պրակտիկայում առկա են փոխադարձության սկզբունքի կիրառման տարբեր եղանակներ [3]: Օրինակ՝ Չինաստանում օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման համար անհրաժեշտ է ապացույց առ այն, որ դատական ակտը համապատասխան երկրում ճանաչվել է կամ համանման իրավիճակում կճանաչվի: Գերմանական մոդելը փոխադարձություն կիրառում է, եթե տվյալ պետության օրենսդրության ուսումնասիրության արդյունքում պարզվում է դատական ակտի ճանաչման հնարավորությունը: Իսկ ահա երրորդ խմբի պետությունները, օրինակ՝ Հայաստանը, առաջնորդվում է փոխադարձության առկայության կանխավարկածով, ինչը ենթադրում է, որ փոխադարձությունն առկա է, քանի դեռ հակառակը չի ապացուցվել: Փոխադարձությունն ինքնին ենթադրում է փոխադարձ միանման գործողության իրականացում, և եթե ՀՀ-ն, սկզբունքի կիրառման մեղմ տարբերակը ընտրելով, հանդես է գալիս զիջողի դերում՝ այլ պետության դատական ակտը ճանաչելով, ենթադրվում է, որ համանման իրավիճակում տվյալ պետությունը կճանաչի իր դատական ակտը: Օտարերկրյա դատական ակտերի ճանաչումը միայն միջազգային պայմանագրերի առկայության հետ կապելու դեպքում բախվում ենք լրջագույն խնդրի. տուժում են մասնավոր անձինք, ովքեր չեն կարողանում ստանալ իրենց օրինական շահերի պաշտպանությունը, իսկ սկզբունքի կիրառման ամենամեղմ տարբերակն արդեն բացառում է այն իրավիճակը, երբ երկու պետություններ սպասեն փոխադարձ ճանաչմանը, քանի որ այս դեպքում ՀՀ դատարանի կողմից դատական ակտի ճանաչման համար պարտադիր պայման չէ նման ակտի՝ այլ պետության կողմից ճանաչված լինելու փաստի առկայությունը: Ուստի, կարծում ենք, որ փոխադարձության սկզբունքի կիրառումը վիճարկելու հնարավորությունը պետք է թողնել այն կողմին, ում դեմ կայացվել է դատական ակտը: Կարծում ենք, որ փոխադարձության սկզբունքը պետք է կիրառվի մասնակի կիրառելիության շրջանակներում, ըստ որի՝ սկզբունքը կգործի, եթե համանման գործով տվյալ պետությունում ՀՀ դատական ակտի ճանաչման և կատարման մերժման դեպք հայցող պետության դատական պրակտիկայում առկա չլինի, քանի որ լրիվ փոխադարձությունը, մեր կարծիքով, ծայրահեղ մոտեցում է և կարող է տանել փակուղի: Մյուս կողմից՝ փոխադարձության սկզբունքի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է ստեղծել տեղեկատվական բազա, որտեղ կլինի այն պետությունների

ցանկը, որոնք մերժել են ՀՀ դատական ակտերի ճանաչումը և կատարումը: Հենց այս կետում է անհրաժեշտ քննարկման առարկա դարձնել փոխադարձության սկզբունքի գլխավոր թերությունը:

Խնդիրն այն է, որ պետք է հաշվի առնել, որ պետությանը ճանաչման և կատարման են ներկայացվում արդեն իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտեր: Դրա համար առաջին հերթին անհրաժեշտ է կենտրոնանալ այն հանգամանքի վրա, որ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման թույլատրելիության ինստիտուտը սուբյեկտիվ իրավունքի պաշտպանության միջոց է, մինչդեռ ճանաչման ներկայացված պետության դատարանը մերժելով զրկում է անձին իր պաշտպանության իրավունքի իրացման եղանակից, իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով ճանաչված իրավունքը տվյալ պետության սահմաններում դառնում է անիրացվելի [5]:

Մենք համաձայն ենք այս մոտեցմանը, քանի որ եթե դատական ակտերի ճանաչման նպատակն անձի՝ արդեն իսկ ճանաչված իրավունքի պաշտպանությունը կամ կիրառելիությունն է իր երկրի սահմաններից դուրս, ապա բախվում ենք հանրային և մասնավոր շահին, ինչի պայմաններում մասնավորն ունի գերակայություն: Այս իրավիճակում, փաստորեն, մի պետության կողմից դատական ակտի ճանաչումը մերժելը հիմք է մեկ այլ պետության կողմից դատական ակտի ճանաչումը մերժելու համար՝ առանց հաշվի առնելու բովանդակային կողմը: Եվ եթե մի պետության կողմից ոչ իրավաչափ հիմքով մերժվի դատական ակտի ճանաչումը և կատարումը՝ տարածվելով այլ պետությունների վրա, ստեղծվում է իրավիճակ, երբ միմյանց դեմ պայքարում են պետությունները՝ հաշվի չառնելով անհատի շահը: Փոխադարձության սկզբունքն, ինչ խոսք, կիրառվում է, սակայն պետությունները փոխադարձում են միմյանց իրենց ոչ իրավաչափ վարքագծով, ինչի արդյունքում տուժում են պետությունների քաղաքացիները: Ավելին՝ հնարավոր է, որ մերժումը պայմանավորված լինի մերժման հիմքերից որևէ մեկի առկայությամբ: Հարց է ծագում, թե նման դեպքերում որքանով է իրավաչափ փոխադարձ մերժման առկայության հիմքով մերժելու դատական ակտի ճանաչումը և կատարումը: Ուստի գտնում ենք, որ Հայաստանի Հանրապետության համար լավագույն տարբերակը կլինի հրաժարումն ինչպես միջազգային պայմանագրի առկայության նախապայմանից, այնպես էլ փոխադարձության սկզբունքից՝ ճանաչման և կատարման հիմքում դնելով միայն դատական ակտերի ճանաչման և կատարման մերժման հիմքերի բացակայությունը:

Հարցադրման շրջանակներում անհրաժեշտ է անդրադարձ կատարել նաև այն գործերի շրջանակներին, որոնք անկախ միջազգային պայմանագրի և փոխադարձության առկայությունից, պարտադիր են ճանաչման և կատարման համար: Դրանք են՝

- 1) անձանց իրավական վիճակի վերաբերյալ դատական ակտերը,
- 2) օտարերկրյա քաղաքացիների միջև ամուսնալուծության կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ օտարերկրյա դատական ակտերը,



3) ՀՀ քաղաքացիների միջև կամ ՀՀ քաղաքացիների և օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց միջև ամուսնալուծության կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ օտարերկրյա դատական ակտերը:

Ի տարբերություն նախկին ՔԴՕ-ի, որը դատական ակտերի ճանաչումը մերժելու հիմքեր չէր սահմանում և վերապահում էր միջազգային պայմանագրերին, նոր ՔԴՕ-ն սահմանում է վերոնշյալ գործերի սահմանափակման դեպքերը՝ համապատասխան մերժման հիմքերի առկայության պայմաններում (այն է՝ դատական ակտն օրինական ուժի մեջ չի մտել՝ համաձայն այն պետության օրենսդրության, որտեղ կայացվել է): Նախ ընդգծենք, որ նոր ՔԴՕ 351-րդ հոդվածը, սահմանելով դիմումին ներկայացվող պահանջների ցանկը, որպես կից փաստաթուղթ սահմանում է նաև պահանջ՝ ներկայացնելու օտարերկրյա դատարանի կողմից հաստատված փաստաթուղթ առ այն, որ դատական ակտը մտել է օրինական ուժի մեջ, եթե դա չի բխում դատական ակտի բովանդակությունից: Պարզ է, որ դիմումի հետ միաժամանակ հայցող կողմը պետք է ներկայացնի համապատասխան ապացույցը, հետևաբար, այս հիմքով ապացուցման բեռն ի սկզբանե դրվում է հայցող կողմի վրա: Հակառակ դեպքում դատարանը վերադարձնում է այն՝ հայցող կողմին հնարավորություն և ժամանակ տալով լրացնելու փաստաթղթերի ցանկը: Խնդիր կարող է առաջանալ, երբ դատական ակտը դեռևս օրինական ուժ ստացած չլինի. ՔԴՕ 354-րդ հոդվածի երրորդ մասի ուժով շահագրգիռ կողմին հնարավորություն է տրվում սույն հիմքով դիմումի ընդունումը մերժելու դեպքում նույն հիմքի վերանայման պայմաններում կրկին դիմելու ՀՀ իրավասու դատարան: Հետևաբար, սույն հիմքով դատական ակտի ճանաչման, կատարման մերժումն արգելք չէ դատական ակտի՝ այն կայացնող պետության կողմից օրինական ուժի մեջ մտնելուց հետո նույն միջնորդությամբ ՀՀ դատարան դիմելու համար: Մի շարք երկրներում դատական ակտը կայացրած պետությունն այս հիմքը չի առանձնացրել այն հիմքերից, որոնք իր օրենսդրության համաձայն կատարման ենթակա չեն, սակայն օրենսդիրը տվյալ դեպքում իրավացիորեն տարանջատում է մտցրել, քանի որ հակառակ դեպքում պարզապես անհնար կլիներ սույն հիմքով մերժել դատական այն ակտերը, որոնք կատարման ենթակա չեն: «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի (Մինսկ, 22.01.1993 թ.) և «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիայի (Քիշնև, 07.10.2002 թ.) համաձայն՝ իրենց բնույթով կատարում չպահանջող գործերը պետք է կատարվեն առանց հետագա վարույթի: Որպես մերժման հիմք սահմանվում է երեք դեպք՝ երբ դատական ակտը օրինական ուժի մեջ չի մտել, նույնական գործով ներպետական մակարդակում ավելի վաղ կայացված որոշում կա, և եթե այն պատկանում է ճանաչող պետության բացառիկ իրավասությանը և մի շարք հիմքեր, օրինակ՝ պարզապես անտեսվել է, որ դատական ակտերը հակասում են հանրային կարգին: Մեր կարծիքով օրենսդիրն իրավացիորեն

է սահմանել, որ մերժման հիմքերի 1-7 կետերի առկայության պայմաններում հարկադիր կատարում չպահանջող դատական ակտերը ենթակա են մերժման:

Մերժման հաջորդ հիմքն առկա է, երբ կողմը գրկվել է դատավարությանը մասնակցելու հնարավորությունից: Նախ ընդգծենք, որ նոր ՔԴՕ 354-րդ հոդվածով որպես դիմումին կից ներկայացվող պարտադիր փաստաթուղթ պահանջվում է ապացույց առ այն, որ դատավարությանը չմասնակցած կողմը (...) ծանուցվել է դատական նիստի ժամանակի և վայրի մասին: Սակայն յուրաքանչյուր դեպքում ծանուցման պատշաճությունը որակելիս անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրելու՝ արդյոք դատական ակտը կայացրած պետության օրենսդրությանը համապատասխան է տեղի ունեցել ծանուցումը, թե ոչ: Մյուս կողմից կարծում ենք, որ իրավաչափ չէ այն մոտեցումն, ըստ որի՝ պատասխանողի պատշաճ ծանուցվելու փաստի ապացուցումը դրվում է դատական ակտի ճանաչումը հայցող կողմի վրա: Տվյալ դեպքում ապացուցման պարտականությունը պետք է դրվեր այն կողմի վրա, որը փաստը վիճարկում է, իսկ այն չվիճարկելու դեպքում պարզապես պետք է համարվեր հաստատված: Նման պայմաններում պատասխանող կողմի առարկության դեպքում ծանուցման մասին՝ օտարերկրյա պետության դատարանի տրամադրած տեղեկանքը չենք կարող համարել բավարար ապացույց, և դատարանը պետք է հնարավորություն ունենա հավելյալ ապացույցներ պահանջելու: Մերժման երրորդ հիմքը սահմանում է՝ առկա է նույն անձանց միջև, նույն առարկայի վերաբերյալ և միևնույն հիմքով գործով ՀՀ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատական ակտ կամ այլ պետության դատարանի կայացրած և ՀՀ դատարանի ճանաչած դատական ակտ. սույն հիմքն, ըստ էության, բաղկացած է երկու ենթահարցից՝

**ՀՀ դատարանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատական ակտ.** այս ենթահարցի շրջանակներում պետք է ուշադրություն դարձնենք երկու պայմանների միաժամանակյա առկայությանը: Այսինքն՝ ՀՀ դատարանի կողմից դատական ակտի կայացումը դեռևս բավարար հիմք չէ ճանաչումը մերժելու համար, քանի որ այն պետք է նաև օրինական ուժի մեջ մտած լինի: Սա նորոյթ է, քանի որ նախկինում որպես մերժման հիմք բավարար էր միայն նման դատական ակտի կայացման փաստը: Այս մոտեցումն արդարացված է, քանի որ քանի դեռ դատական ակտն օրինական ուժի մեջ չի մտել, այն հնարավոր է բողոքարկել, ինչի արդյունքում վեճը կարող է մնալ չլուծված:

**Այլ պետության դատարանի կայացրած և ՀՀ դատարանի ճանաչած դատական ակտ.** խոսքը է գնում այն դեպքերի մասին, երբ նույնական գործով արդեն իսկ հայցվող պետությունը դատական ակտը ճանաչել է: Ժամկետային սահմանափակումն այս դեպքում վերաբերում է ոչ թե օտարերկրյա պետության կողմից դատական ակտի կայացմանը, այլ մինչ այդ՝ ակտի ճանաչման միջնորդություն ներկայացնելուն: Նման հիմքերի նախատեսումը հնարավորություն է տալիս խուսափելու նույնական հայցերով վճռի կայացումից: Հայցերի նույնականությունից խուսափելուն է ուղված նաև հաջորդ հիմքը, որը ենթադրում է ՀՀ դատարանում նույն անձանց միջև, նույն առարկայի

վերաբերյալ և միևնույն հիմքով գործով ավելի վաղ հարուցված վարույթի առկայություն: Հիմքի շրջանակներում ձեր ուշադրությունը պետք է հրավիրենք ավելի վաղ ի հայտ եկած եզրի վրա: Ստացվում է, որ ՀՀ դատարանը յուրաքանչյուր դեպքում պետք է պարզի, թե որ պետությունում է ավելի վաղ սկսվել վարույթը, ինչը առանձնակի բարդություն կարող է հարուցել, քանի որ յուրաքանչյուր երկրում տարբեր պահից է վարույթը համարվում հարուցված: Հետևաբար, մեր կարծիքով՝ յուրաքանչյուր դեպքում պետք է առաջնորդվել առանձին ընթացակարգով՝ հաշվի առնելով այն պետության օրենսդրությունը, որտեղ կայացվել է ճանաչման ներկայացված որոշումը: Մերժման հաջորդ հիմքը սահմանում է, որ գործը, որի վերաբերյալ կայացվել է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը, պատկանում է ՀՀ դատարանների բացառիկ իրավասությանը: Բացառիկ իրավասությունները պետք է մեկնաբանենք՝ ելնելով բացառիկ ընդատության կանոններից: Խնդիր կարող է առաջանալ այնքանով, որ յուրաքանչյուր պետության համար բացառիկ իրավասության տարբեր ոլորտներ են սահմանված: Հետևաբար, միջազգային մակարդակով միասնական մոտեցման ձևավորումը բարդություն է առաջացնում, սակայն հաջորդ հիմքի առանձնացումը՝ գործը, որի վերաբերյալ կայացվել է օտարերկրյա պետության դատարանի դատական ակտը, չի պատկանում այդ պետության դատարանի միջազգային իրավասությանը:

Այս համատեքստում Միջազգային իրավասությունը պետք է մեկնաբանենք որպես դատական ակտի՝ տվյալ պետության հետ էական կապվածության և ՀՀ դատարանի բացառիկ իրավասության մեջ չներառված ոլորտ [3]:

Մերժման հաջորդ հիմքը կապվում է ՀՀ՝ դատական ակտի ճանաչման և կատարման հանրային կարգի հակասության հետ: «Հանրային կարգ» եզրույթը միջազգային տեսա-գործնական ոլորտներում միասնական մոտեցում չի արժանացել: Միջազգային փորձն ուսումնասիրելով հանգում ենք այն եզրակացությանը, որ հանրային կարգը պետք է բնորոշենք բարոյական, իրավական, քաղաքական, տնտեսական ոլորտների շրջանակներում՝ այն առավելապես կապելով ոչ թե բուն դատական ակտի, այլ դրա առաջացրած այն հետևանքների հետ, որոնք կարող են խախտել վերոնշյալ ոլորտներում պետության բնականոն գործունեությունը [7]: Միևնույն ժամանակ նոր ՔԴՕ 355-րդ հոդվածը հնարավորություն է տալիս օտարերկրյա դատական ակտի մասնակի ճանաչելու հնարավորության առկայության դեպքում այն ճանաչել մասնակիորեն, եթե օտարերկրյա դատական ակտի իրավական որոշ հետևանքներ հայտնի չեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը (...): Այսինքն՝ հնարավորություն է տրվում դատական ակտը ճանաչել մասնակի, եթե մի մասը կարող է հակասել ՀՀ հանրային կարգին: Իսկ հանրային կարգին հակասող յուրաքանչյուր գործի պարզաբանումն արդեն պետք է թողնել ՀՀ իրավասու դատարանին:

Անդրադարձ կատարենք դատական ակտերի ճանաչման և կատարման ներկայացնելու ժամկետներին: Համաձայն «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի՝ դատական ակտի կատարման համար կատարողական

թերթն առաջին անգամ կարող է կատարման ներկայացվել մեկ տարվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ՝ օրինական ուժի մեջ է մտել դատական ակտը (...): Վճռաբեկ դատարանն իր ԵԿԴ/0024/16/12 որոշման մեջ մեկտարյա ժամկետի հետ կապված դիրքորոշում է արտահայտել առ այն, որ կատարողական թերթը կատարման ներկայացնելու մեկամյա ժամկետը պետք է հաշվարկել օտարերկրյա դատական ակտը ճանաչելու վերաբերյալ ՀՀ իրավասու դատարանի որոշումն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից: Այսպիսով, քանի դեռ օտարերկրյա դատական ակտը ՀՀ տարածքում օրենքով սահմանված կարգով չի ճանաչվել, կատարման ենթակա չէ՝ անկախ այն հանգամանքից, թե օտարերկրյա պետությունում երբ է կայացվել նշված դատական ակտը կամ երբ է այն մտել օրինական ուժի մեջ: Նոր ՔԴՕ 348-րդ հոդվածը սահմանում է, որ հարկադիր կատարման ենթակա օտարերկրյա դատական ակտը ՀՀ իրավասու դատարան ճանաչման և կատարման կարող է ներկայացվել օտարերկրյա դատական ակտն օրինական ուժի մեջ մտնելու պահից երեք տարվա ընթացքում: Օտարերկրյա դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու պահը որոշվում է այն պետության օրենսդրությամբ, որտեղ կայացվել է դատական ակտը: Այստեղից բխում է դատական ակտի՝ այն ընդունող պետության օրենսդրությանը համապատասխան կարգով ընդունման պահից սկսած երեք տարվա ընթացքում ճանաչման ներկայացվելու շահագրգիռ կողմի իրավունքը: Ժամկետի բացթողումը ճանաչման դիմումը մերժելու հիմք է, իսկ կատարողական թերթի մեկամյա ժամկետը պետք է մեկնաբանել Վճռաբեկ դատարանի կատարած վերլուծության շրջանակներում: Սակայն կարծում ենք, որ ճիշտ կլիներ բացառություն սահմանել, ըստ որի՝ պարտադիր ճանաչման և կատարման ենթակա գործերը պետք է ճանաչվեն և կատարվեն՝ անկախ այն ներկայացնելու ժամկետից: Մյուս կողմից՝ հնարավոր է իրավիճակ, երբ ճանաչման կամ կատարման անհրաժեշտություն ծագի դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո երեք տարվա ընթացքում, սակայն անձն հիմնավոր պայմաններում չկարողանա այն ներկայացնել ճանաչման ժամկետում: Այս դեպքում պետք է նախատեսվեն այն դեպքերը, որոնց դեպքում ժամկետի բացթողումը կհամարվի հարգելի, իսկ ճանաչման ներկայացված դիմումը չի մերժվի: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է սահմանել վաղեմության առանձին ժամկետ, որի լրանալու դեպքում՝ անկախ դատական ակտը չներկայացնելու պատճառներից, այն չի ճանաչվի:

Ամփոփելով սույն գիտական աշխատանքը՝ ընդգծենք, որ օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտը ՀՀ-ում դեռևս զարգացման փուլում է, և անգամ ՔԴՕ փոփոխություններով՝ ունի մի շարք բացեր: Առաջարկում ենք ճանաչման հիմքում որպես նախապայման թողնել միայն դատական ակտի ճանաչումը և կատարումը մերժելու հիմքերի բացակայությունը, իսկ մերժման հիմքերը համապատասխանեցնել ՀՀ օրենսդրությանը՝ համաձայն աշխատանքում ներկայացված պահանջների: Բացի այդ, անհրաժեշտ է սահմանել այն վարույթների շրջանակը, որոնք պետք է ընդունվեն և ճանաչվեն առանց ժամկետային սահմանափակման,

ինչպես նաև տարբերակում մտցնել ճանաչման և կատարման դիմում ներկայացնելու և վաղեմության ժամկետի հաշվարկներում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- [1] **Зайцев Р. В.**, «Признание и приведение в исполнение в России иностранных судебных актов», изд. Волтерс Клувер, 2007, сс. 8-20.
- [2] **Պետրոսյան Ռ. Գ.**, Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2007, էջ 680:
- [3] **Թաղևոսյան Պ. Դ.**, «Օտարերկրյա դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի ճանաչումը և կատարումը Հայաստանի Հանրապետությունում», Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2014, էջ 49-50, 102, 170:
- [4] ՀՕ-221, ընդունված՝ 5 մայիսի, 1998 թ.:
- [5] **Оганесян В. В.**, «Обеспечение условий международно-правовых оснований правомерности разрешения признания и исполнения иностранных судебных актов в гражданском процессе Республики Армения», изд. «Аналитика Родис», «Вопросы российского и международного право», Московская область, г. Ногинск, 2017, сс. 287, 289.
- [6] Երևան քաղաքի Կենտրոն և Նորք Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 12.10.2011թ. որոշումը՝ Լոս Անջելեսի Վերին դատարանի կողմից 26.04.2011 թ. կայացված վճիռը ՀՀ-ում ճանաչելու մասին:
- [7] «Քիչնկյան կոնվենցիայի» 59-րդ հոդված, ընդունված՝ 07.10.2002 թ.:

Ավագյան Գոհար

### ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

**Բանալի բառեր՝** օտարերկրյա դատական ակտեր, դատական ակտերի ճանաչում, դատական ակտերի կատարում, փոխադարձության սկզբունք, դատական ակտերի մերժման հիմքեր, դատավարական ժամկետներ:

Սույն աշխատանքի նպատակն է օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման ինստիտուտի առանձնահատկությունների վերհանումը: Աշխատանքում ներկայացվել և մեկնաբանվել են այն փոփոխությունները, որոնք տեղ են գտել քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքում, վեր են հանվել առկա թերություններն ու խնդիրները, առաջարկվել են համապատասխան փոփոխություններ (մասնավորապես՝ վերանայել փոխադարձության սկզբունքի կիրառման անհրաժեշտությունը), մեկնաբանվել են օտարերկրյա դատական ակտերի ճանաչման և կատարման

արման մերժման հիմքերը: Առաջարկվել է նաև փոփոխություններ կատարել դատավարական ժամկետների հաշվարկում: Ներկայացվել են այն փոփոխությունները, որոնք ներառվել են 2018 թ. խմբագրությամբ քաղաքացիական դատավարության օրենսգրքում:

Авагян Гоар

## **РАЗРЕШЕНИЕ ПРИЗНАНИЯ И ИСПОЛНЕНИЯ ИНОСТРАННЫХ СУДЕБНЫХ АКТОВ ВО ВНУТРИГОСУДАРСТВЕННОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ**

**Ключевые слова:** иностранные судебные акты, признание судебных актов, исполнение судебных актов, принцип взаимности, основания для отказа в признании и исполнении судебных актов, процедурные сроки.

Целью данного исследования является выявление особенностей института признания и обеспечения соблюдения иностранных судебных актов. В ходе работы были внесены и истолкованы поправки к новому Гражданскому процессуальному кодексу, выявлены существующие недостатки и проблемы, предложены изменения (в частности, пересмотр необходимости применения принципа взаимности), а также истолкованы основания для признания и отказа в приведении в исполнение иностранных судебных актов. Также было предложено внести изменения в расчет судебного времени. Были представлены изменения, внесенные в Гражданский процессуальный кодекс под редакцией 2018 года.

Avagyan Gohar

## **PERMISSION OF RECOGNITION AND IMPLEMENTATION OF FOREIGN JUDICIAL ACTS IN GOVERNMENTAL LEGISLATION**

**Key words:** foreign judicial acts, recognition of judicial acts, execution of judicial acts, principle of reciprocity, grounds for refusal of recognition and enforcement of judicial acts, procedural deadlines.

The objective of this study is to identify the peculiarities of the institute of foreign judicial acts recognition and enforcement. In the course of the work, amendments to the new Civil Procedure Code have been introduced and interpreted, the existing shortcomings and problems have been identified, and appropriate changes have been proposed (in particular, revision of the implementation of the principle of reciprocity). The grounds for rejecting and enforcing foreign judicial acts have been touched upon, as well as amendments to the calculation of procedural deadlines has been made. Changes in the Civil Procedure Code edited in 2018 have been presented.